ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 4

«31» 01 2018թ. գ. Երևան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-N 224-Ն օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման 16-րդ կետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N 79-Ն որոշումով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի «04. Փորձաքննությունների ծառայություններ» ծրագրով Հայաստանի Հանրապետության դատախազությանը հատկացված միջոցների հաշվին դատական փորձաքննությունների կատարման ծառայությունները ձեռք բերել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային

կազմակերպությունից՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարաններից (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմիններից ստացված համապատասխան փորձաքննություն նշանակելու մասին որոշումների հիման վրա:

2. Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը՝ 2018 թվականի համար սահմանել 560 դրամ:

3. Հաստատել փորձաքննությունների կատարման ծառայությունների միավորի նախահաշվային արժեքը և ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն հավելվածի (կցվում է):

4. 2018 թվականի ընթացքում տվյալ ծրագրին հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում, անհրաժեշտության դեպքում փոփոխել սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարանների (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմինների կողմից ըստ այդ տեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը չի համապատասխանի հավելվածով նախատեսվածին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 2-օրյա ժամկետում այն հրապարակել Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ա.Դավթյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
«31» հունվարի 2018թ.
N 4 հրամանի

2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Փորձաքննության տեսակի անվանումը	Միավորի նախահաշ-վային արժեքը /դրամ/	Քանակը /հատ/	Ընդամենը նախահաշ-վային արժեքը /հազ.դրամ/
Ձեռագրաբանական	25200	440	11088
Փաստաթղթաբանական	33600	600	20160
Հեղինակային	25200	3	75.6
Ֆոտոտեխնիկական	50400	35	1764
Դիմանկարային	50400	15	756
Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման	67200	150	10080
Հետքաբանական	25200	671	16909.2
Ձգաբանական	33600	300	10080
Պայթյունատեխնիկական	50400	140	7056
Նյութագիտական	33600	799	26846.4
Սննդային	33600	85	2856
Կենսաբանական/հողագիտական/	33600	90	3024
Հրդեհատեխնիկական	50400	200	10080
Շինարարատեխնիկական	33600	177	5947.2
Ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների	16800	127	2133.6
Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի	50400	18	907.2
Տրանսպորտային հետքաբանական	50400	39	1965.6
Տնտեսագիտական	100800	200	20160

Ապրանքագիտական	16800	800	13440
Համակարգչատեխնիկական	84000	350	29400
Մշակութային արժեքների	67200	70	4704
Հոգեբանական	85680	100	8568
Դատաբժշկական	69440	450	31248
Դատաքիմիական (թունաբանական)	11760	2702	31775.5
Դատագենետիկական (ԴՆԹ-նույնականացման)	145600	2	291.2
Օդորոլոգիական (այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի)	33600	2	67.2
Ճարտարագիտատեխնիկական	84000	140	11760
Լինգվիստիկական	85680	4	342.7
Դատաէկոլոգիական	33600	26	873.6
Ընդամենը		8735	284359.0